

ԿՈՆՎԵՆՑԻԱ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռումինիայի կառավարության միջև բույսերի պաշտպանության և ֆիտոսանիտարական կարանտինի բնագավառներում համագործակցության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռումինիայի կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

ցանկանալով ամրապնդել երկկողմ համագործակցությունը բույսերի պաշտպանության և ֆիտոսանիտարական կարանտինի բնագավառներում,

նպատակ ունենալով ապահովել երկու պետությունների տարածքների պաշտպանությունը որոշ բույսերի հիվանդություններից, վնասատուներից և մոլախոտերից (այսուհետ՝ կարանտինային օրգանիզմներ) և սահմանափակել դրանց կողմից պատճառվող վնասները, ինչպես նաև դյուրացնել բույսերի և բուսական ծագման արտադրանքի փոխադարձ առևտուրը և փոխանակումը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակների համար հետևյալ տերմինները նշանակում են՝

- բույսեր - կենդանի բույսեր և դրանց կենդանի մասեր, ներառյալ սերմերը (Հավելված 1),

- բուսական արտադրանք - չվերամշակված բուսական ծագման արտադրանք, (ներառյալ սերմերը, որոնք սահմանված չեն որպես բույսեր), ինչպես նաև վերամշակված արտադրանք, որոնք ձևափոխվելու դեպքում կարող են վնասակար օրգանիզմների տարածման վտանգ ներկայացնել,

- օբյեկտներ – նյութեր, որոնք բուսական ծագման չեն, սակայն ընդունակ են իրենց մեջ կարանտինային օրգանիզմներ կրել և տարածել,

- ֆիտոսանիտարական հսկողություն - գործունեություն, որն իրականացվում է բույսերը, բուսական արտադրանքը, օբյեկտները և տրանսպորտային միջոցները կարանտինային օրգանիզմներից զերծ պահելու համար,

- կարանտինային օրգանիզմներ - Պայմանավորվող կողմերի կանոններում սահմանված ազգային էկոնոմիկայի համար պոտենցիալ կարևորություն ներկայացնող վնասակար օրգանիզմներ, որոնք դեռևս

գոյություն չունեն կամ եթե գոյություն ունեն, ապա տարածված չեն և ենթակա են հսկողության:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի հիման վրա իրականացվող հատուկ համագործակցությունը կատարվում է Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի պետությունում գործող կիրառելի կանոնների և կարանտին օրգանիզմների ցուցակի համաձայն (Հավելված 2):

Հոդված 3

Պայմանավորվող կողմերը պարտավորվում են կիրառել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ մի Պայմանավորվող կողմի տարածքից դեպի մյուս Պայմանավորվող կողմի տարածքը կարանտինային օրգանիզմների անցումը կանխելու համար:

2-րդ Հավելվածում նշված կարանտինային օրգանիզմների ցուցակը սույն Համաձայնագրի մասն է կազմում:

Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կարող են փոխել կամ լրացնել կարանտինային օրգանիզմների ցուցակը:

Կարանտինային օրգանիզմների ցուցակներում կատարված փոփոխությունների և լրացումների, ինչպես նաև դրանց ուժի մեջ մտնելու օրվա մասին դիվանագիտական ուղիներով կհաղորդվի մյուս Պայմանավորվող կողմի իրավասու մարմնին:

Հոդված 4

Երկու Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները համատեղ կուսումնասիրեն և կստուգեն բերքը, անտառները, չհերկված տարածքները, հումքը և բուսական արտադրանքը՝ տեղափոխման և պահպանման ընթացքում, գյուղատնտեսության և անտառապահության համար վտանգավոր կարանտինային օրգանիզմների վարակի օջախների հայտնաբերման նպատակով:

Հոդված 5

Մյուս Պայմանավորվող կողմի տարածքում կարանտինային օրգանիզմների մուտքը և տարածումը կանխելու նպատակով, բույսերի կամ բուսական արտադրանքի ցանկացած արտահանում պետք է կատարվի Պայմանավորվող կողմի՝ այդ նպատակով նշանակված մարմնի կողմից տրված «ֆիտոսանիտարական սերտիֆիկատի»

միջոցով կազմված համաձայն սույն Համաձայնագրի 3-րդ հավելվածում ներկայացված մոդելի:

Ֆիտոսանիտարական սերտիֆիկատը պետք է հաստատի, որ.

- տրանսպորտի համատեղելիությունը ներմուծող երկրի ֆիտոսանիտարական գործող կանոնների հետ,

- արտահանվող բույսերը և բուսական ծագման արտադրանքը զերծ են սույն Համաձայնագրի Հավելվածում նշված կարանտինային օրգանիզմներից կամ այլ պաթոգեն հարուցիչներից, վնասատուներից կամ մոլախոտերից, որոնք բնորոշված են լրացուցիչ դրույթներում,

- այդ բույսերի և բուսական արտադրանքի ծագման վայրը,

- վերամշակումը, որին ենթարկվել է արտադրանքը, կամ այլ լրացուցիչ տվյալներ, որոնք պահանջվում են ներկրողների կողմից:

Վերաարտահանման ենթակա բուսական արտադրանքի համար անհրաժեշտ է նշել վերջինիս ծագման երկիրը:

Փոխադրամիջոցները, որոնք օգտագործվում են այն ապրանքների տեղափոխման համար, որոնք ենթակա են այլ Պայմանավորվող կողմի պետության տարածքում ֆիտոսանիտարական տեսչության վերահսկմանը, պետք է հիմնովին մաքրվեն և անհրաժեշտության դեպքում ախտահանվեն:

Հոդված 6

Բույսերը, բուսական արտադրանքը, օբյեկտները, փաթեթները և տրանսպորտի միջոցները, որոնցով նրանք առաքվելու են, ենթակա են ֆիտոսանիտարական վերահսկման՝ Պայմանավորվող կողմերի համապատասխան կանոնների և կանոնակարգումների համաձայն:

Հոդված 7

Ֆիտոսանիտարական սերտիֆիկատը չի բացառում ներմուծող երկրի կողմից ֆիտոսանիտարական տեսչության իրականացման իրավական պարտավորությունը և անհրաժեշտ համարվող միջոցների կիրառումը (մուտքի մերժում, ախտահանում, միջատների վերահսկում, ոչնչացում և այլն):

Հոդված 8

Ֆիտոսանիտարական կանոններին հակառակ կարանտինային օրգանիզմների և փաստերի հայտնաբերման դեպքում, ներկրող երկրի իրավասու մարմինը անմիջապես պետք է հայտնի այդ մասին արտահանող երկրի իրավասու մարմնին:

Հոդված 9

Կարանտինային օրգանիզմների կամ տնտեսական տեսակետից վտանգավոր վնասատուների ներմուծումը կանխելու նպատակով Պայմանավորվող կողմերը իրավունք ունեն.

- սահմանափակել բույսերի և բուսական արտադրանքի ներկրումը կամ պահանջել հատուկ պայմաններ դրանց ներկրման համար,
- արգելել բույսերի կամ բուսական արտադրանքի ներկրումը:

Հոդված 10

Պայմանավորվող կողմերը արգելում են հողի ներկրումը (բացառությամբ տորֆի), ինչպես նաև խոտի, ծղոտի, մամռային կեղևի կամ կարանտինային օրգանիզմներով վարակման ենթակա այլ նյութերի օգտագործումը՝ որպես փաթեթավորման նյութ:

Հոդված 11

Երկու երկրների դիվանագիտական ներկայացուցիչներին և նրանց անձնակազմերին հասցեագրված բույսերի և բուսական արտադրանքի փոխանակումը պետք է համապատասխանի սույն Համաձայնագրի ֆիտոսանիտարական պահանջներին:

Հոդված 12

Պայմանավորվող կողմերը կապահովեն ֆիտոսանիտարական հսկողությունը սահմանային կետերում (մայրուղիներ, երկաթգիծ, ծովային և օդային ուղիներ), որոնք ստեղծված են բույսերի կամ բուսական ծագման արտադրանքի ներկրման, արտահանման կամ տարանցման համար:

Հոդված 13

Պայմանավորվող կողմերը, ընդունելով գիտական բնագավառում համագործակցության առավելությունները և, հնարավորության դեպքում, բույսերի պաշտպանության մեթոդների և միջոցների միասնականացման պատշաճ առիթները, կխրախուսեն համագործակցությունը հետևյալ միջոցներով.

- տեղեկության փոխանակում անտառների և մշակաբույսերի ֆիտոսանիտարական վիճակի, հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումների և ստացված արդյունքների մասին,

- ֆիտոսանիտարական կարանտինի և բույսերի պաշտպանության վերաբերյալ օրենքների, կանոնների և մասնագիտական գրականության փոխանակում, որը կնպաստի այս բնագավառում երկու երկրների մասնագետների ավելի խորը գիտելիքների ձեռքբերմանը:

Հոդված 14

Պայմանավորվող կողմերը կարող են միմյանց տրամադրել տեղեկություն կարանտինային օրգանիզմների հայտնաբերման և տարածման վերաբերյալ՝ նշելով, որ Պայմանավորվող կողմերից ոչ մեկը չի կարող ստացված տեղեկությունը տրամադրել երրորդ երկրի:

Հոդված 15

Անհրաժեշտության դեպքում Պայմանավորվող կողմերը կազմակերպում են փոխադարձ խորհրդակցություններ՝ սույն Համաձայնագրում նշված խնդիրները լուծելու համար:

Խորհրդակցությունների անցկացման ժամանակը, վայրը և օրակարգը, ինչպես նաև ծախսերի ծածկման եղանակները յուրաքանչյուր անգամ կորոշեն Պայմանավորվող կողմերը:

Հոդված 16

Բույսերի և բուսական արտադրանքի առևտուրը դյուրացնելու նպատակով Պայմանավորվող կողմերը համաձայն են արտահանող Պայմանավորվող կողմի պետության տարածքում համատեղ իրականացնել ֆիտոսանիտարական հսկողություն այն Պայմանավորվող կողմի կանոնների կիրառմամբ, որի տարածք են առաքվում բույսերը և բուսական արտադրանքը:

Համատեղ ֆիտոսանիտարական հսկողության պայմանները, վայրը և ամսաթվերը պետք է համաձայնեցվեն Պայմանավորվող կողմերի միջև:

Հոդված 17

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և իրականացման հետ կապված վիճելի հարցերի դեպքում երկու Պայմանավորվող կողմերը դրանք կլուծեն ուղղակի կապերի կամ այլ ընդունելի եղանակներով: Եթե այս ճանապարհով համաձայնության հնարավոր չլինի հասնել, վեճերը կլուծվեն դիվանագիտական ուղիներով:

Հոդված 18

Սույն Համաձայնագրի իրականացման համար Պայմանավորվող կողմերի համակարգող և պատասխանատու իրավասու մարմիններն են:

Հայկական կողմից՝ գյուղատնտեսության և բնօգտագործման նախարարությունը,

Ռումինական կողմից՝ գյուղատնտեսության և պարենի նախարարությունը:

Սույն Համաձայնագրի իրականացման նպատակով Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները ուղղակի կապի մեջ կլինեն և կարող են համաձայնագրեր ստորագրել այդ նպատակով:

Հոդված 19

Սույն Համաձայնագրի դրույթները չեն հակասում Պայմանավորվող կողմերի այն պարտավորություններին, որոնք բխում են այլ երկկողմ և բազմակողմ միջազգային համաձայնագրերից:

Հոդված 20

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում երկրորդ ծանուցման վաթսուներորդ օրը, որով Պայմանավորվող կողմերը ծանուցում են միմյանց իրենց ներպետական օրենսդրությամբ պահանջվող ընթացակարգերի կատարման մասին:

Հոդված 21

Սույն Համաձայնագիրը կնքվել է հինգ տարի ժամկետով: Այն ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հինգ տարվա համար, եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը առնվազն վեց ամիս առաջ չծանուցի մյուս Պայմանավորվող կողմին այն չեղյալ հայտարարելու իր մտադրության մասին:

Կատարված է Բուխարեստ քաղաքում 2000 թվականի ապրիլի 5-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ռումիներեն և անգլերեն, ընդ որում բոլոր օրինակներն էլ հավասարազոր են:

Տեքստի մեկնաբանման հետ կապված տարաձայնություններ առաջանալու դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի փետրվարի 22-ից: